

(Կառո Միքէլաճէի)

Ահաքեր ժայռը ահա երերաց
Ալեկոծ ծովի սէգ ալիքներից,
Եւ հզօր հիմքը շարժուեցաւ՝ դողաց
Նոր լուսով ծագող հրավառ արեգից:

Ծշո՛ւմ է վա՛յ տալիս ծշում,
Ահ՝ տառապանքի օրերը հասան,
Աւեր է դառնում քոյնը, չգիտէ
Ո՛րտեղ որոնէ իրեն ապաստան:

Կանչում է արծիւն քազէ-ուրուրին
Ագռաւ, կաշաղակ, գիշատիչ հաւքեր,
Ցաւին ցաւացիլ օգնութեան հասնել
Մի կերպ սփոփել անսահման դարդեր...

Օգնում են նրան. Բայց ժայռն ահռելի
Հիմքից Խառնուած շարժում է տեղից,
Զո՛ւր է օգնութիւն, նոքա տրկար են,
Ժովը կատաղած ելնում է ամփից:

Եւ ալիքները քարձր թռիչքներով
Բազէ-ուրուրին հետու են թռցնում,
Իրար ետեւից եկող ահն ու վախը
Արծուի սրտի մէջ հեւանք ծնեցնում:

Ալեկոծում է ծովը. իսկ խաւարն
Տեղի տուեց ծածանչ ծառագայթներին,
Որոնք սփռուեցան երկնքից երկիր
Ոսկէ սաւանով աշխարհ ծածկեցին:

Ահա՛ արշալոյս, ահա՛ ջինջ երկինք,
Ուրախ եւ զուարթ դօղանջ զանգերի,
Ահա՛ քնութիւն թարմ՝ կանաչագարդ,
Լսում է ծի՛ւ ծի՛ւ սթափ ժնձղուկների:

Ժառերը ծաղկագարդ, անթի՛ւ ծաղիկներ,
 Հրծոււմ է ազատ գողտը քնութիւն,
 Գնում են դէպ' ծով, վազում են արագ
 Արարչից ստեղծուած հոգիներ արթուն։

Շարժում է ժայռը անեղ գոչումով
 Եւ հիւքը խղճուկ մօտ է երկփեղկման,
 Ժովը ծփում է, եւ արծուի քոյնը
 Տեսնում է աչքով մերձաւոր վախճան։

Ծչո՛ւմ է արծիւն, վա՛յ տալիս՝ ծչում,
 Ահա տանջանքի օրերը հասան,
 Աւեր է դառնում քոյնը, չը գիտէ
 Որտեղ որոնէ իրեն ապաստան։

Թարգմ. վրաց. Հ. ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ